

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿՐ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԶԵՍՈՒՐՅԱՆՆԵՐԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


**ԳԻՐ ՆԱՅՐԱԴԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՆԱՏԱՆԱՅ
ԱՌ ՄԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՍ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ
ՆՈՒԲԱՐ ԵՒ ԱՆԻՏԱ ԶԵՍՈՒՐԵԱՆՆԵՐ,
ՈՐ Ի ՆԻՒ ԶԵՐՄԻ, ԱՄՆ**

Նամագգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Նայրապետական Մեր ողջոյնն ու օրհնութիւնն ենք յղում Ձեզ եւ վերստին խնդագին գոհունակութեամբ անդրադառնում Ձեր եկեղեցաշէն ու ազգօգուտ գործունէութեանը:

Սիրելի Տէր եւ Տիկին Զեսութեաններ, անձնապէս ծանօթ ենք հաւաքաւոր Ձեր ընտանիքին եւ հոգու առանձնակի բերկրանքով յաղորդ Ձեր աստուածահաճոյ գործերին: Արդարեւ երանեալ էք Դուք եւ շնորհ ունէք Ամենախնամ Աստուծոյ, Ով զօրացնում է Ձեզ եւ Ձեր կեանքը լցնում եկեղեցուն, հայրենիքին ու հարազատ ժողովրդին մարտգամ ծառայութեան երջանկութեամբ:

Աստուծոյ օրհնութեամբ Դուք տասնամեակներ շարունակ հոգեւոր ու նիւթական Ձեր կարողութիւնները սիրառատ ոգով ծառայեցնում էք հայրենական ու եկեղեցական մեր կեանքի շինութեանն ու զօրացմանը, սրբազան մեր արժէքների անխաթար պահպանմանն ու զարգացմանը: Ձեր գործերը, ծնունդ առած առ Աստուած հաւաքով եւ առ հարազատ ժողովուրդը անկեղծաւոր սիրով, բարի անուն ու ճանաչում են բերում Ձեզ ինչպէս Սփիւքում, այնպէս եւ Մայր Նայրենիքում:

Ձեր կեանքի տարիները համընկան հայրենի մեր երկրի անկախութեան վերահաստատմանը եւ հայրենաբնակ մեր ժողովրդի հոգեւոր վերազարթոնքին: Սիրելի Տէր եւ Տիկին Զեսութեաններ, Դուք անփոխարինելի նպաստ բերեցիք եւ շարունակում էք բերել Սեւանի Վազգէնեան Նոգեւոր Դպրանոցին՝ հիմնադրման օրից առաւելեռն նուիրաբարոյութիւններով աջակցելով նրա կայացմանն ու զօրացմանը: Այսօր կրթօջախի հինգ սերունդ շրջանաւարտները Նայաստանում եւ արտերկրում սպասաւորում են բարեպաշտ ու հաւաքաւոր մեր ժողովրդին, հաստատութեան լուսաւոր հարկի ներքոյ ասելի քան հիստուն երկրասարդներ շարունակում են իրենց հոգեւոր կրթութիւնը: Նրանք բոլորն էլ աղօթքով ու երանաբարկութեամբ են յիշում Ձեզ,



գնահատում ի նպաստ իրենց հոգեւոր կրթութեանն ու դաստիարակութեանը բերած Ձեր աջակցութիւնը, որը լաւագոյն վկայութիւնն ու վարձարութիւնն է Ձեր անսակարկ նուիրումի:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնը եւ Ձեր ծառայութեանց ու վաստակի ամենաբարձր գնահատանքով շնորհում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պարտոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով բարեմաղթում ենք, որ Երկնատր Տէրը Սուրբ Գրիգոր Լուսատուի բարեխօսութեամբ Իր Հայրական հովանու ներքոյ պահի ու պահպանի Ձեզ, Ձեր ազնիւ Տիկնոջը եւ զաւակաց՝ պարգեւելով քաջառողջ ու երջանիկ կեանք եւ յարանորոգ յաջողութիւններ ազգանուէր Ձեր բոլոր իրագործումներում:

«Ողջ լնդութ ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգոյն եւ յաւեր օրհնեալ ի Մենք. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուա Կոնդակս ի 22-ն Մայիսի

յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարաւ 89